acba
09 մարտի 2023թ.
ք. Երևան

Թիվ 061-60

# ԵՐԱՇԽԻՔ ԹԻՎ 20 61 40 426315/77

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/43» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) մասնակցելուց բխող նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 16.467.000 (տասնվեց միլիոն չորս հարյուր վաթսունյոթ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև Բենեֆիցիարի կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/43» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով Պրինցիպալի կողմից հայտը ներկայացնելու օրվանից հաշված մեկ հարյուր քսան աշխատանքային օր, սակայն ոչ ուշ, քան 15 սեպտեմբերի 2023թ.-ը ներառյալ: Սույն Երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ առանց գումարի չափի մասին նշման, Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Էրեբունի» մասնաճյուղի կառավարիչ Կ. Քոթանջյան

Digitally signed by OHANYAN HARUTYUN 1614560242
Date: 2023.03.13 20:36:23 AMT

*Կատարող*
*Գայանե Սահակյան*
*Հեռ. 010 31-88-88 (ներքին՝ 8259)*